57. ՔՅՈՌՕՂԼԻՆ ՂԱՃԱՂ Ա ԻՆԳՑՈՒՄ

Քյոռօղլուն հօ՛րը խանըեն ծիյանքը պըհելիս ա իլա՛լ։ Նրան մին քանի անում ա իլա՛լ։ Համ Հասան ըն իլա՛լ ըսելիս, համ՝ Ալի՛, համ էլ՝ Արշակ։

Մին օր խանըեն կօշտը ղումաղնըե յըն կյամ, վըեր տրա ծիյանցան էրկու լա՛վը ճօկըեն։ Խանը Հասանին ասում ա, վըեր քյինա՛ էրկու լա՛վ ծի ճօկե։ Հասանը քյինա՛մ ա էրկու ամըենաքընձըռնոտ քուռըկնե ճօկում, պիրո՛ւմ։ Ղումըղնըեն ծիծաղում ըն, խանն էլ կըղնըվում ա, հրաման տամ, վըեր Հասանին աշկըեբը քուռըցնըեն, ծիյանքը լա՛վ չըըսնալի հեռե։ Հասանն էլ էտ ծիյանցը հորը տըեսած ա իլա՛լ Կասպիս ծովան տո՛ւս կյա՛լիս, խանըեն ծիյանցը նհըետ խըռնըվըելիս։ Տա վըեր թոռումըեն էրկու ծիյանցը մուտանում ա, տրանցա էրկու քուռակ ըն ծնվում, մինին անումը տինում ա Ղռաթ, մինինն էլ՝ Դորաթ։

Հասանըեն քուռըցնում ըն, խանն էլ ծեն ա տամ, էրկու քուռակը տամ ի՛րա՛ն, հըղըե տինո՛ւմ։ Հասանը տաճանց մթըեն կյուռում ար պահում։ Տըհանցա Ղռաթը սև ա ինո՛ւմ, Դորաթը՝ չալ, տըպտըպօրիգյ։

Մին տարըե վըեր անց ա կենում, Հասանը տղըեն՝ Ռուշանըեն ասում ա.— Սև ծին կյումա՛ն տո՛ւս կալ քշի, տըես հունց ա։ Մին ըեծ բըլյանա դո՛ւզ վարել ա տամ, արխը կապում վարըեն յիրա՛, ըեխ չինո՛ւմ, մին էրկա՛ն քյա՛նդիր էլ յոր օնում ճումըղըեն մինը ծի-

յին անա կապում, էն մին ճոնդն էլ պեց թողում։ Ասում ա.—Թա վըրն էնքան ճեյլի վազ տա, վըեր քյինդիրին ճոնդը տափան պիցրա̈նա, ըրըմը պինըցնըեյի վախտն ա։

Թուշանը վըեր ծին քշո̈ւմ ա քյինդիրին ճոնդը տափան պիցրանում ա, ամմա ծիյին քըթըծըկըերան ա̈ռո̈ւն ար քյինա̈մ։ Մին տարըն յել ըն ծին կյումումը պահում։ Մին տըռնանը հեր նորը մինա̈ն կյուման տո̈ւս ըն օնում, էլա քշո̈ւմ։ Էս դյննո̈ւմ քըթըծըկըերան արո̈ւն չար քյինա̈մ։ Թուշանը ծին յիհա̈րո̈ւմ ա, քշո̈ւմ...

Մին օր Թուշանը ըսկանում ա, վըեր խանըեն քշտին ծիյանցը մրցութըյուն կա։ Հօրն ասում ա։ Հա̈րն էլ ասում ա.—Քյինա̈, ամմա հանց ըրա, վըեր քեզ ճինանչին վըեչ։ Թուշանը իտի յել անում ա։ Մին լոխճընան առաչ ա ինգյո̈ւմ։ Հըվաքված մարթիքյ ո̈ւրո̈ւր անա հըրցըփորց ըն անում, հըրցնում, թա հու վա՞ էս տղան։ Ճինընչուղնըե յըն ինո̈ւմ, ասում ըն, վըեր քոռըեն տղան ա։ Խանը ծիյըվորնըե յա ղարկում, վըեր ծին փռնըեն, պիրին։ Մինչև էտ Թուշանը եկալ ար հորը կոչտը։ Տղան Ղռաթը, հարը Դոբաթը նըստած փախճում ըն։ Խանըեն ղարկած ծիյըվորնըեն վըեր մուտանում ըն, հա̈րը տղըեն ասում ա.— Քըրքարոտ տըղըերավ քշի, ծիյըվորնըեն կարըեյ չըն մըեզ հըսնըեն։ Քըրքարոտ տըղըերավ քշո̈ւմ ըն, նորըմինա̈ն դո̈ւզ տըեղ ինգյո̈ւմ։ Հենց վըեր կյա̈րմո̈ւր ծիյըվորնըեն կյամ ըն, հա̈րն ասում ա.—Քուլըերավը քշի։ Քուլըերավը վըեր քշո̈ւմ ըն, կյըվող ծիյըվորնըեն քամակ ըն մնամ։ Մինգյեյ վըեր սըև ծիյըվորնըեն ըն մուտանում, հա̈րը տղըեն ասում ա.—Վարած տըղըերավ քշի։ Վարած տըղըերավ վըեր քշո̈ւմ ըն, կյըվող ծիյըվորնըեն էլլա քամակ ըն մնամ։ Տահանք իտի հըսնում ըն Զամլիբել, բոլեղ տըղըրնըեն պընդըցնում։ Հա̈րը տղըեն ասում ա, վըեր միշտ սայաղ մնա էտ ինգյո̈ննըերըեն ապրող ղաչաղ Դա̈լի-Հա̈սա̈նըեն անա։

Քյոռօղլուն հա̈րը մըեռնում ա։ Քյոռօղլին մին օր դեդինա̈ պըտահում ա Դա̈լի-Հըսա̈նըեն։ Դա̈լի-Հա̈սա̈նն ասում ա.—Էս երգյիրին տարը ես ըմ, տու ըստըեղեքյ հինչ պե՞ն օնըես։ Քյոռօղլին ասում ա.—Կռըև անըենքյ, հու հաղտըե, նա յել կինի էս երգյիրին տարը։

Կռըև ըն անում։ Քյոռօղլին Դա̈լի-Հա̈սա̈նըեն վըեր ա քցո̈ւմ, պկըեն չոքում, օղում ա թա կյո̈խը կտրըե։ Դա̈լի-Հա̈սա̈նը լա̈ց ա ինո̈ւմ, ղաչանք-պըղատանք անում, վըեր ո̈ւրա̈ն ըսպանըեվուչ, յոր օնըե ո̈ւրա̈ն քշտին նոքյա̈ր։ Քյոռօղլին տրան էլ ըսպանում չի։ Ցոր ա օնում ո̈ւրա̈ն հնգըեր։